Հավելված
Հաստատվել է ՀՀ ՀՊ
2021թ. հոկտեմբերի —ի թիվ — որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածական մաս 3

2. Ամփոփագիր 4

3. Հաշվեքննության հիմնական արդյունքներ 4

4. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ 5

5. Խեղաթյուրումների վերաբերյալ գրառումներ 9

6. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ 9

1. Ներածական մաս

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021թ. օգոստոսի 2-ի թիվ 213-Ա որոշման հիման վրա
Հաշվեքննության օբյեկտը	Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտ
Հաշվեքննության առարկան	Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն
Հաշվեքննության առարկայի չափանիշները	ՀՀ Ազգային ժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-21-Ն օրենք, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշում
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2021թ. հունվարի 1-ից մինչև 2021թ. հունիսի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2021թ. օգոստոսի 9-ից մինչև 2021թ. հոկտեմբերի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն, իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցման, արտաքին հաստատման, վերլուծական, վերահաշվարկի և վերակատարման ընթացակարգեր:
Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի երկրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Աբրամ Բախչագուլյանը:

2. Ամփոփագիր

ՀՀ դատական դեպարտամենտի 2021 թվականի կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգերի հրապարակման ենթակա համապատասխան փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ հրապարակված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ գնումների ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների նկատմամբ:

3. Հաշվեքննության հիմնական արդյունքներ

Հաշվեքննության ընթացքում ստացվել են բավարար տեղեկատվություն հաշվեքննության իրականացման համար:

Էական անհամապատսխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, հայտնաբերված անհամապատասխանությունները և խեղաթյուրումները համատարած չեն:

Հայտնաբերված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների ցանկ

Հ/Հ	Միջոցառման կամ գնման ընթացակարգի ծածկագիրը	Գնման ընթացակարգի հայտարարման ամսաթիվը	Անհամապատասխանության և խեղաթյուրման նկարագրություն
1.	1080-11008		«ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում» միջոցառման 411200 «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» և 411300 «Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում» հոդվածներում LS FINANCE գանձապետական էլեկտրոնային համակարգում առկա տեղեկատվության և ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ներկայացված տեղեկատվության փաստացի

			ծախսի ցուցանիշներում առկա են տարբերություններ:
2.	ԴԴ-ՄԱ-ԱՊՁԲ-21/15	11/08/2021թ.	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով սահմանված ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող աշխատանքային օրը տեղեկագրում հրապարակման ենթակա պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվել է տեղեկագրում 3 աշխատանքային օր ուշացումով:

4.Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ

ՀՀ դատական դեպարտամենտի համար ՀՀ 2021թ.-ի պետական բյուջեի տարեկան պլանը կազմել է՝ 12,165,312.5 հազ. դրամ: Առաջին վեց ամիսների պլանը կազմել է՝ 5,144,246.6 հազ.դրամ, ճշտված պլանը՝ 5,162,229.7 հազ դրամ, ֆինանսավորումը՝ 4,795,026.28 հազ. դրամ, փաստը՝ 4,787,232.81 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 5,682,767.38 հազ. դրամ:

2020թ-ին տարեկան պլանը կազմել է 12,662,335.6 հազ. դրամ, 2020թ.-ի առաջին վեց ամիսների պլանը կազմել է՝ 5,416,583.7, ճշտված պլանը՝ 5,359,079.2 հազ.դրամ, ֆինանսավորումը՝ 4,524,188.34 հազ. դրամ, փաստը՝ 4,516,304.17 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 5,455,154.75 հազ. դրամ: 2021 թվականի առաջին կիսամյակում 2020թ.-ի համեմատ փաստը ավելացել է 270,928.64 հազ. դրամով կամ 6%-ով:

«Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեության ապահովում և Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատական իշխանության անկախության երաշխավորմանն ուղղված միջոցառումների իրականացում» ծրագրի շրջանակներում 2021 թվականի ընթացքում գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների տարեսկզբին հաստատված գնումների պլանով նախատեսվել է 1,672,197.4 հազ. դրամ գումար: 2021 թվականի առաջին կիսամյակում գնումների պլանում կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում ընդհանուր գումարը կազմել է 1,467,549.1 հազ. դրամ: ՀՀ դատական

դեպարտամենտի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն 2021թ. գնումների պլանով նախատեսված և մինչև 2021 թվականի հունիսի 30-ը ներառյալ կազմակերպված թվով 222 գնման ընթացակարգերի շրջանակներում կնքվել է թվով 255 պայմանագիր ընդհանուր 811,104.28 հազ. դրամ պայմանագրային արժեքով, որից գազի, էլեկտրականության և խմելու ջրի բաշխման, հանրային հեռախոսային, փոստային, ինչպես նաև գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների համար կնքվել է թվով 177 պայմանագիր ընդհանուր 642,304.63 հազ. դրամ պայմանագրային արժեքով: Նշված պայմանագրերի շրջանակներում ներկայացված կատարողականներով վճարվել է ընդհանուր 407,951.78 հազ. դրամ, որից գազի, էլեկտրականության և խմելու ջրի բաշխման, հանրային հեռախոսային, փոստային, ինչպես նաև գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների համար՝ 355,828.12 հազ. դրամ:

ՀՀ դատական դեպարտամենտ 2021 թվականի 1-ին կիսամյակ

Աղյուսակ 1

Ծրագիր		2021 թ. 1-ին կիսամյակ	2020 թ. 1-ին կիսամյակ		
		Փաստ	Փաստ	Տարբերություն	Տարբերություն %
	ԸՆԴԱՄԵՆԸ	4 787 232,81	4 516 304,17	270 928,64	6,0%
1080-11001	Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեության ապահովում և Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատական իշխանության անկախության երաշխավորմանն ուղղված միջոցառումների իրականացում	1 112 870,44	1 032 442,08	80 428,36	7,8%
1080-11002	ՀՀ Վճռաբեկ դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	292 614,15	286 235,68	6 378,47	2,2%
1080-11003	ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	209 251,67	198 105,50	11 146,17	5,6%

1080-11004	ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	232 057,70	211 877,01	20 180,69	9,5%
1080-11005	ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Վերաքննիչ վարչական դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	131 394,34	121 130,56	10 263,78	8,5%
1080-11006	ՀՀ վարչական դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Վարչական դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	303 231,85	270 240,17	32 991,68	12,2%
1080-11007	Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	926 869,06	874 890,10	51 978,96	5,9%
1080-11008	ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	105 052,40	100 243,37	4 809,03	4,8%
1080-11009	ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	195 897,69	168 919,97	26 977,72	16,0%
1080-11010	ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	142 102,69	138 775,16	3 327,53	2,4%
1080-11011	ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	147 807,05	144 754,21	3 052,84	2,1%
1080-11012	ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի	168 728,85	172 536,76	-3 807,91	-2,2%

	կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում				
1080-11013	ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	160 598,13	145 813,80	14 784,33	10,1%
1080-11014	ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	173 321,08	173 693,11	-372,03	-0,2%
1080-11015	ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	126 794,51	119 415,06	7 379,45	6,2%
1080-11016	ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	113 032,56	100 702,88	12 329,68	12,2%
1080-11017	ՀՀ Սնանկության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Սնանկության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում	158 198,36	155 423,51	2 774,85	1,8%
1080-11018	Բարձրագույն դատական խորհրդի և ՀՀ դատարանների պահուստային ֆոնդի ձևավորում և կառավարում	22321,9	11 237,13	11 084,77	98,6%
1080-31001	Բարձրագույն դատական խորհրդի տեխնիկական հագեցվածության բարելավում	0	25 788,87	-25 788,87	-100,0%
1015-12001	Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում	65088,38	64079,24	1 009,14	1,6%
1015	Սոցիալական փաթեթների ապահովում				
	1015-12001	Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում			

5. Խեղաթյուրումների վերաբերյալ գրառումներ

1. Համաձայն LS FINANCE գանձապետական էլեկտրոնային համակարգում առկա տեղեկատվության՝ 1080-11008 «ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի բնականոն գործունեության և ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դատական պաշտպանության իրավունքի ապահովում» միջոցառման 411200 «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածի 2021 թվականի առաջին կիսամյակի փաստացի ծախսը կազմել է 19,071.0 հազ. դրամ, իսկ 411300 «Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում» հոդվածի 2021 թվականի առաջին կիսամյակի փաստացի ծախսը կազմել է 6,272.27 հազ. դրամ:
ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն 411200 հոդվածի ծախսը կազմել է 22,885.166 հազ. դրամ, իսկ 411300 հոդվածի ծախսը՝ 2,458.096 հազ. դրամ: Տարբերությունը համապատասխանաբար կազմում է 411200՝ 3,814.166 հազ. դրամ, 411300՝ 3,814.174 հազ. դրամ:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Վերոնշյալի կապակցությամբ հայտնում ենք, որ Ձեր կողմից արձանագրված անհամապատասխանությունը տեխնիկական վրիպակի արդյունք է, որն արդեն իսկ ուղղվել է ինն ամիսների ֆինանսական հաշվետվության մեջ:

Հաշվեքննող խմբի արձագանքը.

Ընդունվել է ի գիտություն:

6. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ

1. Կազմակերպված գնման ընթացակարգերում՝ հրապարակման ենթակա փաստաթղթերի կազմման և հրապարակման պահանջների կատարումը՝ գնումների ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, ուսումնասիրությունից պարզվեց, որ.

ԴԴ-ՄԱ-ԱՊՁԲ-21/15 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգում, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվել է տեղեկագրում 11.08.21թ.: Նույն հայտարարության մեջ նշված է, որ գնահատող հանձնաժողովի 05.08.21թ. թիվ 2 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները, համաձայն որի որոշվել է ընտրված մասնակիցը: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը, ուստի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվել է տեղեկագրում 3 աշխատանքային օր ուշացումով:

Հաշվեքննության օբյեկտի բացատրություն.

Այս կապակցությամբ հարկ ենք համարում տեղեկացնել, որ ԴԴ-ՄԱ-ԱՊՁԲ-21/15 ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 4-րդ կետի, ինչպես նաև՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 23-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մեկ անձից գնում կատարելու ընթացակարգով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված անգործության ժամկետը կիրառելի չի եղել: Թեև ԴԴ-ՄԱ-ԱՊՁԲ-21/15 ծածկագրով կազմակերպված ընթացակարգի շրջանակում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը 3 աշխատանքային օր ուշացումով է հրապարակվել, այդուհանդերձ, այն չի հանգեցրել գնման ընթացակարգի կամ դրա արդյունքի փոփոխմանը, ինչպես նաև շահագրգիռ կողմերից որևէ մեկի շահերի ոտնահարմանը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Դատական դեպարտամենտի կողմից կձեռնարկվեն համապատասխան միջոցներ՝ հետագայում նմանատիպ անհամապատասխանություններ թույլ չտալու ուղղությամբ:

Հաշվեքննող խմբի արձագանքը.

Ընդունվել է ի գիտություն, սակայն գնումների գործընթացում հնարավոր գնման ընթացակարգի կամ դրա արդյունքի փոփոխման, ինչպես նաև շահագրգիռ կողմերից որևէ մեկի շահերի ոտնահարման ռիսկերը բացառելու նպատակով անհրաժեշտ է խիստ հսկողություն սահմանել ընթացակարգային գործընթացի իրականացման նկատմամբ, իսկ գործընացը կազմակերպել գնումների ոլորտը կարգավորող իրավական նորմերի խիստ պահպանմամբ:

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Ա. Բախչագուլյան